# K-12 Դպրոցներում COVID-19-ով Վարակման Կառավարման Ծրագրի Արձանագրության Հավելված՝ COVID-19-ի Բռնկումների Կառավարում

**Վերջին Թարմացումներ** – Փաստաթղթում փոփոխությունները նշված են դեղին գույնով:

**1/25/21.** Թարմացվել է՝ նշելու համար, որ հնարավոր ազդեցության վերաբերյալ ծանուցումներ թողարկելիս պետք է պահպանվի գաղտնիությունը, դեմքի ծածկոցի և դեմքի վահանի օգտագործման վերանայված պահանջները արտացոլելու համար, մուտքի զննմանը վերաբերող մանրամասները հստակեցնելու, ծանուցումների և բացառումների պահանջները թարմացնելու և COVID-19 բռնկում ունեցող K-12 դպրոցները ժամանակավորապես փակել պահանջելու համար: Բացի այդ, ավելացվել է հղում K-12 դպրոցների COVID-19 գործիքակազմին:

Հանրային Առողջապահության նպատակային արձագանքը՝ ուղղված համայնքի մակարդակով COVID-19-ով վարակման դեպքերին, կարող է օգնել առավելագույնի հասցնել Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության (DPH) պատասխան արձագանքը COVID-19-ին:

Տարրական և միջնակարգ դպրոցները, որոնք սպասարկում են Մանկապարտեզից մինչև 12-րդ Դասարանի (K-12 Դպրոցներ) աշակերտներին, համայնքի վստահված գործընկերներն են: K-12 Դպրոցները, որտեղ կան COVID-19-ով վարակման դեպքեր, կարող են օգնել Հանրային Առողջապահության Վարչությանը (DPH) բարելավել Հանրային Առողջապահության Վարչության արձագանքի արդիականությունը և ազդեցությունը՝ բռնկման կառավարման միջոցառումների իրականացման միջոցով, որպեսզի օգնեն կասեցնել բռնկումը և կանխել COVID-19-ի հետագա տարածումը:

K-12 Դպրոցների կողմից առաջարկվող ուսումնական գործընթացները պետք է իրականացվեն Հանրային Առողջապահության Վարչության K-12 Դպրոցների Վերաբացման Արձանագրություններում մանրամասնորեն ներկայացված դրույթների համաձայն: Հանրային Առողջապահության Վարչության K-12 Դպրոցներում COVID-19-ով Վարակման Կառավարման Ծրագիրը ուրվագծում է առաջարկվող և անհրաժեշտ լրացուցիչ քայլեր՝ K-12 Դպրոցներում COVID-19-ով վարակման 1,2 կամ 3 դեպքերը կառավարելու համար: Ավելին, եթե դպրոցում կա COVID-19-ի բռնկում, ապա դպրոցը պետք է կիրառի սույն Հավելվածում ներկայացված միջոցառումները: Սույն Հավելվածը ներառում է այն հիմնական գործողությունները, որոնք խորհուրդ են տրվում իրականացնել COVID-19-ի հետագա տարածումը կանխելու համար: Կարող են առաջարկվել կամ պահանջվել լրացուցիչ միջոցառումներ այն տարածքների համար, որտեղ կա բռնկում:

Բռնկումը սահմանվում է որպես՝ 14 օրվա ընթացքում լաբորատոր հետազոտության արդյունքում հաստատված ախտանիշներ ունեցող (սիմպտոմատիկ) կամ առանց ախտանիշների (ասիմպտոմատիկ) առնվազն 3 COVID-19-ի դեպքեր այն խմբում*, որի անդամները համաճարակաբանորեն կապված են, միևնույն ընտանիքի անդամ չեն հանդիսանում, և դպրոցի տարածքից դուրս միմյանց հետ սերտ շփում չունեն: *Դպրոցի խմբերը ներառում են անձանց, որոնք դպրոցում մասնակցում են համատեղ գործողությունների (համատեղ անդամակցություն) (օր.՝ դասասենյակ, դպրոցական միջոցառում, արտադպրոցական գործողություններ, գիտական դասեր, սպորտային թիմեր, ակումբներ, փոխադրումներ): Համաճարակաբանական կապերը պահանջում են եթե վարակված անձը միևնույն ժամանակահատվածում ներկա է եղել այն միևնույն վայրում, որտեղ մեկ կամ ավելի անձ վարակված է եղել:

Սույն փաստաթուղթը կարող է թարմացվել նորությունների կամ նոր աղբյուրների հասանելի դառնալու դեպքում: Խնդրում ենք կանոնավոր կերպով այցելել Հանրային Առողջապահության Վարչության COVID-19-ի վեբ կայքը՝ http://ph.lacounty.gov/media/Coronavirus
թարմացումներին և լրացուցիչ աղբյուրներին ծանոթանալու համար:

## K-12 Դպրոցներում Բռնկման Կառավարման Միջոցառումներ

Եթե K-12 Դպրոցներում կա COVID-19-ի բռնկում, ապա Հանրային Առողջապահության Վարչության Բռնկմանն Արձագանքող Թիմը կհամակարգի Դպրոցը՝ մշակելու և կիրառելու բռնկմանն արձագանքելու ծրագիր: Բռնկումը քննող անձը կնշանակվի՝ որպես կապող անձ Դպրոցի համար և կտրամադրի ուղեցույց, տեխնիկական աջակցություն և ռեսուրսներ՝ Դպրոցին բռնկմանն արձագանքի հետևյալ կամ ցանկացած առաջարկվող այլ միջոցառումների իրականացմանը աջակցելու համար: Այդ միջոցառումները կարող են օգնել կանխել բռնկումը և աշակերտներին, ուսուցիչներին և անձնակազմին պաշտպանել COVID-19-ից:

### Բռնկմանն Արձագանքելու Պլանավորում

☑ *Պահանջվում է՝* Դպրոցը պետք է նշանակի COVID-19-ին Համարժեք Օպերատիվ Խումբ, որը պատասխանատու կլինի COVID-19-ի անվտանգության բոլոր արձանագրությունների ստեղծման և իրականացման համար, ինչպես նաև ապահովելու համար, որ անձնակազմը և աշակերտները ստանան COVID-19-ի վերաբերյալ ուսուցում:

☑ *Պահանջվում է՝* Դպրոցը պետք է նշանակի COVID-19-ին Համարժեք Պատասխանատու Անձ, որը կծառայի որպես Հանրային Առողջապահության Վարչության հետ կապող անձ, այնքան ժամանակ, մինչև դպրոցին կտեղեկացվի, որ բռնկումն ավարտվել է:

### Տարածք(ներ)ի Ժամանակավոր Փակումը Հասարակության համար

☑ *Պահանջվում է՝* Եթե Տարածք(ներ)ում բռնկում է տեղի ունենում, Տարածք(ներ)ում բոլոր անձնական գործողությունները, բացառությամբ նվազագույն հիմնական գործողությունների, պետք է դադարեցվեն մինչև աշխատանքային օրվա ավարտը, և Տարածք(ներ)ը պետք է փակ լինի հասարակության համար Տարածք(ներ)ում բռնկման սկզբի օրվանից 14 օրվա ընթացքում, ինչպես նշվում է Հանրային Առողջապահության կողմից: Այդ ընթացքում ոչ մի ուսանող, ուսուցիչ, անձնակազմ կամ հասարակության անդամ չի կարող ֆիզիկապես ներկա լինել Տարածք(ներ)ում, բացառությամբ անձնակազմի կամ այլ անձանց, որոնք պետք է ներկա լինեն Տարածք(ներ)ի անհրաժեշտ մաքրումն ու ախտահանումը իրականացնելու և Նվազագույն Հիմնական Գործողությունների պահպանման համար, որոնք հիմնական գործողություններն են, և անհրաժեշտ են հետևյալի համար.

- Պահպանել և պաշտպանել դպրոցի գույքագրման և օբյեկտների արժեքը
- Ապահովել ապահովությունը, անվտանգությունը և ախտահանումը
- Մշակել աշխատավարձերը, աշխատողների նպաստները և դրանց հետ կապված կառավարման գործողությունները
- Ապահովել, որ անձնակազմը կարող է հեռակա աշխատել, և որ Դպրոցը կարող է կրթական ծառայություններ մատուցել ուսանողներին հեռավար ուսուցման միջոցով
- Պատրաստել և բաշխել անվճար և ցածր գնով սնունդ իրավասու ուսանողներին՝ միայն մոտենալ վերցնելու համար
- Օգնել Հանրային Առողջապահության ներկայացուցիչներին բռնկումների հետաքննության ընթացքում
- Իրականացնել վարակի վերահսկման համար պահանջվող փոփոխությունները

Դպրոցը պետք է չեղարկի բոլոր դասերը և դպրոցական գործողությունները, որոնք պահանջում են աշակերտների, ուսուցիչների, անձնակազմի և/կամ հասարակության անդամների ֆիզիկական ներկայությունը Տարածք(ներում) բռնկման սկզբի օրվանից 14 օրվա ընթացքում, ինչպես նշվում է Հանրային Առողջապահության կողմից: Դասերը և դպրոցական գործողությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում, ակադեմիական, արտադպրոցական, մարզական դասերը (ներառյալ երիտասարդական սպորտը), դպրոցահասակ երեխաների ցերեկային խնամքը, ճամբարները և համայնքային գործողությունները, որոնք անցկացվում են դպրոցական կանոնավոր ժամերին, դրանց ընթացքում և դրանից հետո մասնաշենքում կամ մասնաշենքից դուրս գտնվող տարածքներում:

Դպրոցը կարող է շարունակել իրականացնել Նվազագույն Հիմնական Գործողություններ և հեռահար մուտքի գործողություններ, ներառյալ առցանց դասընթացներ, վեբինարներ, հեռադիտումներ և տեսակոնֆերանսներ, որոնք չեն պահանջում ուսանողներից ֆիզիկապես ներկա գտնվել Տարածք(ներ)ում կամ ցանկացած այլ խմբակային միջավայրում:

## COVID-19-ով Վարակված Անձանց (Դեպքերի) և Կոնտակտավոր Անձանց Հայտնաբերում

☑ *Պահանջվում է*՝ Դպրոցը 24 ժամվա ընթացքում պետք է Հանրային Առողջապահության Վարչության կողմից Դպրոցին նշանակված Բռնկումը Հետաքննող Անձին ներկայացնի հետևյալ Ցուցակը և թարմացումները ինչպես կարգադրված է ստորև՝

- Դեպքերի Վերաբերյալ Ցուցակ, որը տալիս է տեղեկություններ բոլոր այն անձանց մասին, որոնք Դպրոցի Տարածքում (ներսում) բացահայտվել են որպես COVID-19-ի դեպքեր (ինչպես սահմանված է DPH-ի կողմից): Նշում՝ Գծային Ցուցակը պետք է ներառի հիվանդանալուց առաջ 14 օրվա ընթացքում Դպրոցի Տարածք(ներ)ում գտնված աշխատողների և երեխաների շրջանում COVID-19 հիվանդության դեպքերը:
- Հնարավոր Վարակվածների Ցուցակ, որը տալիս է տեղեկություններ բոլոր այն անձանց մասին, որոնք հնարավոր է շփված լինեն COVID-19-ի դեպքերի հետ (Սերտ շփում ունեցած անձինք՝ ինչպես սահմանված է DPH-ի կողմից) Դպրոցի Տարածքում (ներսում):

Եթե Ցուցակները հնարավոր չլինի ներկայացնել սահմանված ժամանակամիջոցում, Դպրոցը պետք է անմիջապես կապ հաստատի DPH Բռնկումը Հետաքննող Անձի հետ՝ ծրագրի շտապ ներկայացման հարցով: Դպրոցը պետք է ներկայացնի այդ տեղեկատվությունը հետևյալ տարբերակով՝ COVID-19-ի Դեպքի և Կոնտակտավորների Ցուցակ Կրթական Ոլորտի Համար: Բացառության կարգով կարող է կիրառվել Տեղանքին Հատուկ Ձևաչափված Ցուցակ, եթե պահանջվող բոլոր տվյալները ներառված լինեն և կիրառման համար հաստատված լինեն DPH Արձագանքի Թիմի կողմից:

## Ծանուցումներ և Բացառություններ

☑ *Պահանջվում է*՝ Դպրոցը COVID-19-ով վարակված անձանց պետք է հրահանգի, որպեսզի նրանք հետևեն Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության Արտակարգ Իրավիճակներում Մեկուսացման Հրամանին և COVID-19-ի համար Տնային Մեկուսացման Հրահանգներին:

☑ *Պահանջվում է*՝ Դպրոցը պետք է բոլոր անձանց տեղեկացնի այն մասին, որ նրանք բացահայտվել են՝ որպես COVID-19-ով վարակված անձի կոնտակտավոր անձինք և Դպրոցի Տարածքում (ներսում) իրենց կողմից COVID-19-ով հնարավոր վարակման մասին և պետք է կարգադրի նրանց հետևել Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության Արտակարգ Իրավիճակներում Մեկուսացման Հրամանին և COVID-19-ի համար Տնային Մեկուսացման Հրահանգներին: Վարակված անձանց ծանուցելիս պետք է ձեռնարկվեն համապատասխան նախազգուշական միջոցներ հիվանդների գաղտնիությունը պաշտպանելու համար:

Դպրոցում Վարակման Մասին Ծանուցման նամակի օրինակը հասանելի է այստեղ՝ COVID-19-ի Ծանուցման Նամակի Օրինակ Կրթական Հաստատությունների համար: Վարակման վերաբերյալ ծանուցումը պետք է ներառի հետևյալը՝

- Վարակված անձի հետ շփված աշակերտները և աշխատակիցները պետք է COVID-19-ի թեստ հանձնեն անկախ այն բանից՝ նրանք ախտանիշներ ունեն, թե ոչ, և թեստի պատասխանի մասին պետք է տեղեկացնեն Դպրոցին: Թեստավորման արդյունքները կորոշեն Դպրոցում հիվանդության տարածման մասշտաբը և հիմք կծառայեն հետագա վերահսկման միջոցառումների համար: Թեստավորման աղբյուրները ներառում են՝ Աշխատակիցների Առողջապահական Ծառայություններ կամ Մասնագիտական Առողջապահական Ծառայություններ, Աշակերտների Առողջապահական Կենտրոն, Անձնական Բժիշկներ և Համայնքային Թեստավորման Տեղանքներ՝ covid19.lacounty.gov/testing. Անձինք, ովքեր բժիշկ գտնելու հարցում աջակցության կարիք ունեն,

կարող են զանգահարել Լոս Անջելեսի Շրջանի Տեղեկատվական Գիծ 2-1-1 հեռախոսահամարով, որը հասանելի է՝ 24/7:

- Վարակված Անձի հետ շփում ունեցած աշակերտները և աշխատակիցները պետք է վարակված անձի հետ վերջինիս վարակակիր լինելու ժամանակ վերջին շփումից հետո 10 օրով կարանտին պահպանեն, անգամ եթե իրենց կարանտին պահպանելու ընթացքում թեստի բացասական պատասխան ստանան: Եթե նրանք մնում են առանց ախտանիշների, 10-րդ օրվանից հետո նրանք ազատվում են կարանտինից, բայց պետք է շարունակեն վերահսկել իրենց առողջությունը և խստորեն պահպանել COVID-19 կանխարգելիչ նախազգուշական միջոցները 14 օրվա ընթացքում: Նշում՝ Անձի մոտ, ում թեստի պատասխանը բացասական է, կարող է հետագայում զարգանալ հիվանդությունը՝ ախտանիշների դրսևորմամբ կամ առանց ախտանիշների դրսևորման, եթե թեստը հանձնել են ինկուբացիոն ժամանակահատվածում (օր.՝ վարակված անձի հետ շփման և հիվանդությունը սկսվելու միջև ընկած ժամանակահատվածը): Տե՛ս COVID-19-ի Համար Տնային Կարանտինի Ուղեցույց:
- Հանրային Առողջապահության Վարչությունը նաև կապ կհաստատի վարակված անձանց և նրանց հետ շփում ունեցած աշակերտների և աշխատակցների հետ անմիջապես Հանրային Առողջապահության Վարչության՝ Վարակված Անձանց և Նրանց Հետ Շփում Ունեցած Անձանց Քննության Ծրագրի միջոցով՝ հավաքագրելու լրացուցիչ տեղեկություններ և ըստ անհրաժեշտության տրամադրելու Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության Արտակարգ Իրավիճակներում Մեկուսացման Հրաման կամ Արտակարգ Իրավիճակներում Կարանտին Պահպանելու Հրամանը:

☑ *Պահանջվում է*՝ Դպրոցը պետք է որոշի՝ արդյոք անհրաժեշտ է լրացուցիչ ծանուցում դպրոցի ավելի լայն զանգվածին տեղեկացնելու համար դպրոցում վարակման դեպքի և այն նախազգուշական միջոցառումների մասին, որոնք իրականացվում են COVID-19-ի տարածումը կանխելու համար: Ընդհանուր Ծանուցման նամակի օրինակը հասանելի է այստեղ՝ COVID-19-ի Ծանուցման Նամակի Օրինակ Կրթական Հաստատությունների համար: Եթե սերտ շփում ունեցած անձանց ինքնությունները հայտնի չեն կամ նրանց հնարավոր չէ գտնել, Դպրոցը պետք է համագործակցի Հանրային Առողջապահության Վարչության հետ՝ հանրային ծանուցում (հանրային հայտարարություն) մշակելու և հրապարակելու համար: Բռնկման քանակները և տեղանքները նույնպես հանրորեն կհրապարակվեն Հանրային Առողջապահության Վեբ Կայքում՝ առանց անձնական նույնականացումների՝ մինչև բռնկման ավարտը:

☑ *Պահանջվում է*՝ Դպրոցը պետք է վարակված անձանց և նրանց հետ շփում ունեցած անձանց բացառի աշխատանքից, ծառայություններ ստանալուց կամ Դպրոցի Տարածք(ներ)ում ցանկացած միջոցառումներին մասնակցությունից մինչև նրանք չհամապատասխանեն ինքնամեկուսացումից և ինքնակարանտինից դուրս գալու կրիտերիաներին համապատասխանաբար:

☑ *Պահանջվում է*՝ Դպրոցը պետք է համագործակցի Հանրային Առողջապահության Վարչության հետ՝ մշակելու ծրագիր՝ հեշտացնելու ախտորոշիչ թեստավորումն այն անձանց համար, որոնք Դպրոցի Տարածքում շփվել են վարակված անձի հետ և նրանց թեստավորման հասանելի աղբյուրներին հղումներ տրամադրելու (օր.՝ ինչպես կիրառելի է, Աշխատակիցների/Մասնագիտական Առողջապահական, Աշակերտների Առողջապահական Ծառայություններ, անձնական բժիշկներ, առևտրային թեստավորման ծառայություններ և/կամ թեստավորման համայնքային տեղանքներ՝ covid19.lacounty.gov/testing):

☑ *Պահանջվում է*՝ Դպրոցը պետք է զեկուցի Դպրոցին նշանակված Հանրային Առողջապահության Վարչության Բռնկումը Քննող Անձին COVID-19 ցանկացած լրացուցիչ հիվանդների, ինչպես նաև ցանկացած հոսպիտալացման և մահվան դեպքերի մասին, որոնք տեղի են ունենում հիվանդների և նրանց հետ շփվողների շրջանում:

### Բռնկման Վերահսկման Լրացուցիչ Միջոցառումներ

☑ *Պահանջվում է*՝ Դպրոցը պետք է հետևի Հանրային Առողջապահության մաքրման և

ախտահանման ուղեցույցին, որը ներառում է՝ սարքավորումների մանրակրկիտ մաքրում և ախտահանում, կրթական/աշխատանքային միջավայրի, և հաճախակի հպման մակերեսների և առարկաների մաքրում և ախտահանում՝ COVID-19-ով վարակված անձի հետ հնարավոր շփումից հետո, ինչպես նաև կանոնավոր մաքրումների և ախտահանման ավելացում՝ հաստատված մաքրման միջոցներով, որոնք թվարկված են Շրջակա Միջավայրի Պաշտպանության (EPA) կողմից հաստատված "N" ցանկում, ՝ ըստ արտադրանքի հրահանգների: Եթե EPA-ի կողմից հաստատված ախտահանիչներ հասանելի չեն, ապա կարող են օգտագործվել այլընտրանքային ախտահանիչներ (օրինակ՝ 1/3 բաժակ բլիչ լուծույթը ավելացնել 1 գալոն ջրին, կամ 70% սպիրտ պարունակող լուծույթներ): Իրար Չխառնե՛լ բլիչ կամ այլ մաքրող կամ ախտահանող արտադրանքները, քանի որ դա կարող է հանգեցնել թունավոր գոլորշիների առաջացմանը, որոնք կարող են շատ վտանգավոր լինել շնչելու համար:

☑ *Պահանջվում է*՝ Դպրոցը պետք է աշակերտների, հաճախորդների, հանրության կամ Դպրոցի Տարածքում մյուս աշխատակիցների հետ շփում ունեցող բոլոր աշխատակիցներին տրամադրի անվճար կտորե դիմակներ, որոնք պետք է կրել Դպրոցի Տարածքում, եթե չի արգելվում տարիքի կամ ոչ ակնհայտ առողջական խնդրի կամ առողջական վիճակի պատճառով: Դպրոցը պետք է նաև տրամադրի դեմքի վահաններ, որոնք պետք է կրել դեմքի կտորե ծածկոցի հետ յուրաքանչյուր աշխատողի, ով հոգ է տանում հիվանդ երեխաների մասին, կամ ով սերտ շփում ունի ցանկացած երեխայի հետ, ով այնպիսի առողջական խնդիր ունի, որը բացառում է երեխայի կողմից դիմակի օգտագործումը:

☑ *Պահանջվում է*՝ Դպրոցը պետք է հետևի ռեսուրսների վերահսկման առաջարկություններին, որոնք շարադրված են Դիմակների Ուղեցույցում և K-12 Դպրոցների Վերաբացման Արձանագրություններում: Ասիմպտոմատիկ և նախա-սիմպտոմատիկ փոխանցման խնդիրը լուծելու համար, Դպրոցը պետք է պահանջի դպրոցի տարածք մուտք գործող և տարածքում գտնվող բոլոր անձանցից ՝ այդ թվում 2 տարեկան և բարձր տարիքի երեխաներից, կրել կտորե դիմակներ՝ ծածկելով քիթը և բերանը, մուտք գործելիս և ընդհանուր տարածքներում, քայլուղիներում գտնվելիս կամ այն վայրերում, որտեղ մարդիկ կարող են հավաքվել, եթե միայն դա խորհուրդ չի տրվում տարիքի կամ առողջական խնդրի պատճառով: Անձնակազմը պետք է մշտապես կրի դեմքի ծածկոց, բացառությամբ եթե միայնակ աշխատում է փակ դռներով անհատական աշխատասենյակում կամ եթե ուտում կամ խմում է: Ցանկացած անհատ ով առողջական խնդիրների պատճառով ազատված է դեմքի ծածկոց կրելուց, պետք է կրի այլընտրանք, ինչպիսին է դեմքի վահանը՝ ներքևի եզրին շղարշով (ցանկալի է, որ կզակի տակ տեղադրված լինի), քանի դեռ նրանց պայմանները դա թույլ է տալիս: 2-ից 8 տարեկան երեխաները պետք է դիմակ կրեն մեծահասակների հսկողությամբ՝ երեխայի անվտանգ շնչառությունն ապահովելու և խեղդվելուց խուսափելու համար:

☑ *Պահանջվում է*՝ Դպրոցը պետք է ներառի սոցիալական (ֆիզիկական) հեռավորության պահպանման բոլոր միջոցառումները ըստ Լոս Անջելեսի Շրջանում գործող Սոցիալական Հեռավորություն Պահպանելու Արձանագրության և K-12 Դպրոցների Վերաբացման Արձանագրությունների: Սա ներառում է պահանջվող սոցիալական (ֆիզիկական) հեռավորության պահպանում այն դեպքերում, երբ դիմակ կրել չի պահանջվում (օրինակ ուտելիս կամ խմելիս):

☑ *Պահանջվում է*՝ Դպրոցը պետք է իրականացնի Ստուգումներ Մուտք Գործելիս՝ համաձայն DPH-ի Մուտքի Ստուգման Ուղեցույցի և K-12 Դպրոցների Վերաբացման Արձանագրությունների: Ստուգումները պետք է ներառեն ախտանիշների վերաբերյալ հարցեր, որոնք համահունչ են հնարավոր COVID-19- ին, ցանկացած այլ ախտանիշներ, որ անհատը կարող է ունենալ, և հարցեր՝ արդյոք վերջին 14 օրվա ընթացքում անձը շփում է ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, թե ոչ: Ջերմության ստուգումը նույնպես պետք է կատարվի մինչև Դպրոցի տարածք մուտք գործելը: Այդ ստուգումները կարող են իրականացվել հեռակա կարգով՝ օգտագործելով թվային հավելված կամ այլ ստուգողական մոտեցում կամ անձամբ անձի ժամանելուն պես: Դպրոցը պետք է հետևի DPH Աշակերտների Ախտանիշների և Վարակված Անձի Հետ Շփման Ստուգումների ուղեցույցին՝ որոշումներ կայացնելու սիմպտոմատիկ երեխաների և հնարավոր վարակված երեխայի հետ շփում ունեցած անձանց համար: COVID-19-ի ախտանիշներ ունեցող կամ թեստի

դրական պատասխան ունեցող չափահաս այցելուներին և աշխատակիցներին կարող են թույլ չտալ մտնել դպրոցի տարածք, ինչպես նշվում է DPH-ի Մուտքի Ստուգման Ուղեցույցում: Աշակերտներին, որոնց հնարավոր COVID-19-ի վարակին համահունչ ախտանիշների ստուգման պատասխանը դրական է, պետք է տրվի վիրաբուժական դիմակ և նրանք պետք է ուղեկցվեն նախապես նախատեսված մեկուսացման տարածք, որտեղ նրանք կարող են մնալ մինչ բացառման վերաբերյալ որոշման կայացումը և տուն վերադառնալու համար պայմանավորվածություններ ձեռք բերելը, որտեղ նշված է: Շտապ բժշկական օգնություն տրամադրող բժիշկները ազատվում են ստուգվելուց:

- ☑ *Պահանջվում է՝* Դպրոցի տարածքում արգելվում են այցելուները, բացառությամբ նրանց, ովքեր ծառայություններ և/կամ աջակցություն են մատուցում, որոնք կարևոր են Դպրոցի առաքելության և/կամ գործունեության համար: Մուտքի ստուգում և դիմակ կրել պահանջվում է կարևոր այցելուներից: Իրավապահ Մարմինների Անձնակազմը (Շերիֆ և Ոստիկանություն), Հրշեջներ, Բժիշկներ կամ կառավարության ներկայացուցիչներ, որոնք արձագանքում են, աշխատում են կամ հետաքննում են հաստատությունը, կարող են մուտք գործել Դպրոցի տարածք:

- ☑ *Պահանջվում է՝* Բռնկման Ընթացքում Դպրոցը պետք է իր Տարածքում դադարեցնի բոլոր ոչ կարևոր անձնական - խմբակային գործողությունները:

**K-12 Դպրոցների COVID-19-ի Լրացուցիչ Աղբյուրների համար խնդրում ենք այցելել՝ http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/reopening-la.htm#k12 և http://ph.lacounty.gov/acd/ncorona2019/EducationToolkit/TK12**